



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

02.09.2024թ.

ՈՐՈՇՈՒՄ 1052-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ ՀԱՄԱՆՔԻ
ԳՈՐԻՍ ՔԱՂԱՔԻ Մ. ՄԱՇՏՈՅԻ ՓՈՂՈՑ ԹԻՎ 63 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ
ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության «Հայաստանի Հանրապետությունում շենքերի, շինությունների կամ դրանց մի հատվածի գործառնական նշանակությունը փոփոխելու կարգը հաստատելու մասին» 2002 թվականի փետրվարի 2-ի թիվ 88 որոշման 1-ին կետով և հիմք ընդունելով Գորիս քաղաքի բնակիչ Սեյրան Պողոսյանի 2024 թվականի օգոստոսի 14-ի դիմումը

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1. Սեյրան Պողոսյանին սեփականության իրավունքով պատկանող Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորիս համայնքի Գորիս քաղաքի Մ. Մաշտոցի փողոց թիվ 63 հասցեի 09-003-0029-0011 կադաստրային ծածկագրով ընդհանուր 547,0 մակերեսով բնակելի տան 49,5քմ մակերեսի գործառնական նշանակությունը փոխել հասարակական գործառնական նշանակության՝ որպես սպասարկման կետ:
2. Սույն որոշումն ենթակա է գույքային իրավունքների պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ա. ԱՌՈՒՇԱՆՅԱՆ

2024/02/09
Բ. Գորիս

